



*Շրջակա միջավայրի նախարարության  
«Հիդրոտեղեկատվության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ*

---

*ԱԳՐՈՏԵԼԵՎՈՒԹԱԲԱՆԱԿԱՆ*

*ՏԵՂԵԿԱԳԻՐ*

*2023*

---


*Ապրիլի առաջին տասնօրյակ*

*Տեղեկագիրը կազմել է ագրոտեղեկատվության բաժինը՝ մասնագիտացված ագրոտեղեկատվության կայաններից ստացված տեղեկատվության հիման վրա:*

*Տեղեկագրի պատասխանատու՝ տնօրենի տեղակալ Գ. Մուրենյան*

## ՀԻՄՆԱԿԱՆ ՕԴԵՐԵՎՈՒԹԱԲԱՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ապրիլի առաջին տասնօրյակում օդի միջին ջերմաստիճանը եղել է նորմայի սահմաններում մի փոքր դրական շեղումով:



Տասնօրյակի ամենաբարձր ջերմաստիճանները դիտվել են ապրիլի 4-ին և 5-ին. Տավուշում +19...+22°C, Վայոց ձորում՝ լեռնային շրջաններում՝ +13...+15°C, նախալեռնային շրջաններում՝ +22...+24°C, Սյունիքում՝ հովտային շրջաններում՝ +26...+29°C, նախալեռնային շրջաններում՝ +17...+19°C, Շիրակում՝ +15...+18°C (Աշոցք՝ +12°C), Կոտայքում՝ լեռնային շրջաններում՝ +14...+18°C, նախալեռնային շրջաններում՝ +18...+20°C, Գեղարքունիքում՝ +13...+17°C, Լոռիում՝ +18...+20°C, Արմավիրում, Արարատում՝ +22...+24°C, Արագածոտնում՝ լեռնային շրջաններում՝ +13...+15°C, նախալեռնային շրջաններում՝ +16...+21°C:

Տասնօրյակի ամենացածր ջերմաստիճանները դիտվել են 1-ին, 2-ին. Տավուշում -2...+2°C, Վայոց ձորում՝ լեռնային շրջաններում՝ -6...-8°C, նախալեռնային շրջաններում՝ +1...+3°C, Սյունիքում՝ հովտային շրջաններում՝ +1...+3°C, նախալեռնային շրջաններում՝ -2...-4°C, Շիրակում՝ -3...-8°C, Կոտայքում՝ լեռնային շրջաններում՝ -5...-8°C, նախալեռնային շրջաններում՝ 0...-2°C, Գեղարքունիքում՝ -4...-9°C, Լոռիում՝ -1...-6°C, Արմավիրում՝ 0...-2°C, Արարատում՝ 0...-2°C, Արագածոտնում՝ լեռնային շրջաններում՝ -3...-6°C, նախալեռնային շրջաններում՝ 0...-2°C:



Տասնօրյակի ընթացքում տեղումների գումարային քանակը Շիրակում կազմել է 19-31մմ (127-241%), Լոռիում՝ 14-24մմ (77-122%), Տավուշում՝ 15-20մմ (78-99%), Արագածոտնում՝ լեռնային շրջաններում՝ 14-29մմ (97-107%), նախալեռներում՝ 11մմ (65%), Գեղարքունիքում՝ 19-27մմ (136-245%), Կոտայքում՝ լեռնային շրջաններում՝ 39մմ (137-141%), նախալեռներում՝ 18մմ (106%), Արմավիրում՝ 12-13մմ (96-107%), Արարատում՝ 13-17մմ (85-133%), Վայոց ձորում՝ լեռնային շրջաններում՝ 31մմ, նախալեռներում՝ 9մմ (57%), Սյունիքում՝ նախալեռնային շրջաններում՝ 9-11մմ (45-51%), հովտային շրջաններում՝ 6մմ (50%):

Հանրապետությունում հողի մակերևույթի նվազագույն ջերմաստիճանը գրանցվել է լեռնային շրջաններում՝ -7...-12°C, Արարատյան դաշտում՝ -3...-5°C, Վայոց ձորի նախալեռներում, Տավուշի և Սյունիքի հովտային շրջաններում՝ 0...+1°C:



**Աշնանացան ցորեն**

Առանձին լեռնային շրջաններում աշնանացան ցորենը ցողունակալել է, հովտային և որոշ նախալեռնային շրջաններում առաջացել են ծեղացողունի ներքին հանգույցները:

Լեռնային շրջաններում աշնանացանի բարձրությունը տասնօրյակի վերջին կազմել է 8-14սմ, հովտային և նախալեռնային շրջաններում՝ 18-27սմ, տասնօրյակային աճը կազմել է 3-5սմ:

Մերձավանում աշնանացանի դաշտում բույսի աճի և զարգացման համար կարևոր գործոն հանդիսացող հողի արդյունավետ խոնավության պաշարները 0-10սմ շերտում կազմել է՝ 11մմ, 0-20սմ շերտում՝ 26մմ, 0-30սմ շերտում՝ 46մմ, որն անցյալ տասնօրյակի համեմատ նվազել է 3-6մմ-ով:



## **Պարզաբաններ, խաղող**

Հովրային շրջաններում շարունակվել է ծիրանենու պտղի ձևավորումը: Դեղձենու ծաղկումն ավարտել է:

Սյունիքի հովրային շրջաններում ընկուզենին, սերկևիլը ծաղկել են, առաջացել է խաղողի վազի ծաղկաբույլերը:

Լեռնային շրջաններում հնդավորների բողբոջները ուռչել և բացվել են, նախալեռնային շրջաններում առաջացել են առաջին տերևները, տեղ-տեղ՝ ծաղկաբույլերը: